Armenian Research & Academic Repository

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

The licensor cannot revoke these freedoms as long as you follow the license terms.

Under the following terms:

- **Attribution** — You must give appropriate credit, provide a link to the license, and indicate if changes were made. You may do so in any reasonable manner, but not in any way that suggests the licensor endorses you or your use.
- **NonCommercial** — You may not use the material for commercial purposes.

9352

5602.
5273
9352

[illegible]



50000

5000

5000000

# ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑ

# ԿԱՐՃԱՌՕՏ

# ՔԱՐՈԶՆԵՐ

Թարգմանութիւն

---

Ի հայրապետութեան Տն ՅՈՎ-
ՀԱՆՆՈՒ Կարբեցւոյ
սրբազնասուրբ կաթուղի
կոսի ամենայն հայոց։

Հրամանաւ Տեառն ԲԱՂՏԱ-
ՍԱՐԱՑ իշխանազնի Ջալա-
լեան սրբազան Արք եպիսկո-
պոսի և մետրապոլտի Հայ
ոց համայն Աղուանից։

---

Ի ՇՈՒՇԻ։
Յամի Տեառն 1822

Ս· ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ

Համաձայն կտակի վաղաթառամ դոկտոր աստուածաբանութեան Արշակ Տէր-Միքելեանի նուիրում է նրա եղբայր Սեդրակ Տէր-Միքելեանը·

№

## ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ։

Ի՞նչ օգուտ է մարդոյ՝ որ ամէն աշխարհքըն ստանայ, և իրան անձին վնաս տայ։ կամ թէ ի՞նչ գին կըտայ մարդ իրան անձըն փրկելու համար։ (Մատթ. ժզ. 26։)

Էս շատ երևելի բանս քանի՞ քիչ միտք է առնըվում աշխարհքի մէջ. քանի՞ քիչ են նորանք՝ որ իրանց հոգու փրկութիւնըն իբր կեանքի գըլխաւոր գործ են համարում։ Դուք որ հիմիկ էս փոքր գրքի խօսքերըն կարդումէք, և կամ լսումէք մի՞թէ մին ժամանակ մտքներդ առէք էն մեծ գործըն. այսինքն ձեր հոգու փրկութիւնըն. և հիմիկ մի՞թէ էնպէս էք վարվում, որ ստանաք և վայելէք նորան։ Եթէ էնպէս անէք, ապա էս խօսքս, որ հիմիկ կարդալու էք յայտ-

նի ցույց կըտայ ձեզ էն խորհուրդները
և մտածմունքները, որ ձեր սրտի մէջ
տպաւորւած են։ Ինչպէս որ խնձա-
նում մարմին կայ, էնպէս էլ հոգի
կայ։ Իմ՝ հոգիս կապրի յաւիտեան,
կամ ուրախութեան մէջ՝ և կամ ո-
ղորմելութեան և խղճութեան մէջ։
Նա կարող է անասելի մեծ ցաւեր
քաշել և կամ ուրախութիւններ վա-
յելել, քան թէ իմ մարմինս։

Եթէ յաւիտենական աշխարհքին
մտիկ տամ. քիչ բան է, եթէ էստեղ
աղքատութեան մէջ ընկած լինիմ,
կամ մեծութեան մէջ բարձրացած՝
էս քիչ տարիներիս ժամանակումն որ
աշխարհքի մէջ մնալու եմ. եթէ
իմ մահկանացու ընկերներիցս փա-
ռաւորվիմ կամ անարգվիմ. եթէ իմ
մարմինս շատ հիւանդ լինի, կամ
առողջ, ցաւերով լցված, կամ հան-
գստութենով ուրախացած. Էս ա-
մէնս շատ քիչ բան է։ Ինչու որ
մահն հաստատ է և մօտաւոր։ Շու-
տով իմ մեռած մարմնոյ վերայ կաս-
վի. թէ հողը թող դէպի հող դառ-

նայ. և մոլորդ դէպի մոլոր։ Ապա Թէ որ բոլոր աշխարհքըս էլ իմը յատուկ ստացված ունենամ ինձ, ի՞նչ օգուտ կըկարենայ բերել ինձ համար իմ մահուան սահաթումն, կամ ի՞նչ մխիթարութիւն կըտայ ինձ։ Բայց ամէնից շատ հարկաւոր քննութիւնն որ ես պէտք է անեմ, էս է՝ որ բոլոր մտքով հարցնեմ. Թէ իմ հոգիս մինչև յաւիտեան ուրա՞խ կը լինի կամ ողորմելի, հրեշտակներին և կատարելութեամն մէջ հասած սրբերին ընկեր կը լինի Աստուծոյ աթոռի չորս կողմումը. և կամ կըդատապարտվի, որ հոգւոց հանելով և ատամները կըրճտելով և լաց լինելով դևերի հետ և դատապարտված հոգիների հետ, տանջվի դժոխքումն. որտեղ որ որդն իսկի չի մեռնիլ և կրակն իսկի չի ջնջվիլ։

Ապա սրա համար իմ գլխաւոր գործս, և ցանկութիւնս և ջանքս միշտ հենց մէնակ էս պէտք է լինի, որ փախչիմ էն բարկութենիցն, որ գալու է, և մին հաստատ ժառան-

գուլթիւն գտնեմ սրբերին հետ, որ լուսոյ միջումն են բնակվում։ Ապա կրակի էսպէս է։ Որ աշխարհք շատ աւելի է իմ մտքումս. էս հիմիկվանս, թէ նոր եկօղն. Դրին համար եմ շատ աւելի հոգս անում. Չէ՞ որ շատ անգամ զբաղմունքի մէջ եմ լինում, և հոգս անում. թէ ի՞նչ պիտի ուտեմ, կամ ինչ պիտի խմեմ, կամ թէ ի՞նչ պիտի հագնեմ։ Բայց ե՞րբ ճշմարտութենով քննեցի. թէ ի՞նչ պէտք է անել ինձ որ ապրիմ։ Թէ որ իմ հոգոյ փրկութեան համար ջերմեռանդ փափակ չունենում, և ճշմարտութենով հոգս չանեմ՝ ապա անսխալ կարօղ եմ գիտենալ՝ թէ իմ վիճակս չար է, և իմ հոգիս կորուստի մօտն է։

## ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ։

Ամէն ով որ մեղք է գործում, նա անօրէնութիւն էլ է անում։ և հենց ինքն մեղքն անօրէնութիւն է։ (Ա. Յոհ. Գ. 4։)

Ո՞վ մեղաւոր մարդ՝ մի թէ մին ժամանակ քննեցի՞ր, թէ մեղքն ի՞նչ է։ Ո՛ւ թէ մին ժամանակ պարապվեցա՞ր աստուծոյ խօսքըն քննելոյ, որ կարենաս անախալ իմանալ էս չար բանըս որ ամէն չար բաների գլխաւորն է։ Եթէ էն իսկի մին ժամանակ չըքննեցիր, ապա քո վիճակդ չար է, և անասելի չար։ Դու շատ պէտք է վախենաս քո փրկութեանն համար որ իսպառ չըկորցնես նորան։

Ապա սրտի մտօք մտիկ արա էս ասուած խօսքերիս. և քո սիրտըդ բարձրացրու դէպի աստուած և ասա. Տէ՛ր շնորհէ՛ր ինձ, որ քո ճշմարիտ լուսովդ հաստատ ճանաչեմ՝ թէ ինչ է մեղքն և թէ ինչ է նորա չարութիւնն։ Ա՛հ հիմիկ հենց մեղքն ինքն անօրէնութիւն է, և անօրէնութիւնն օրէնք քանդելն է։ Ապա Ո՞ր օրէնքի. ամենաստուրբ աստուծոյ օրէնքին։ Ա՛հ Ո՞ր տեղ կարելի է էս օրէնքըս գըտնել։ Ա՛հա սա էն տասն պատուիրանքներումն է գրուած՝ որ աստուած մօսէսի

ձեռովըն տուաւ մեզ։ Ապա քննի՛ր քո անձըդ․ միթէ ես մին ժամանակ կարդացի՞ նորանից ահով լցված սըր-տով և սարսափելի ձայնով, որ հար-ցնեմ իմ անձըս՝ թէ լինի՞ որ ես էլ աստուծոյ սուրբ օրէնքի էս կամ էն պատուիրանքըն քանդեցի։ Մի՞ թէ մին ժամանակ մտածեցի՝ թէ կարելի՞ է խորհրդով էլ քանդել օ-րէնքըն, ինչպէս որ խօսքով կամ գործքով։ Մի՞ թէ մին ժամանակ միտք արի՞, թէ օրէնքն հոգևոր է, և ներս է մտնում մինչև խորհուրդնե-րի մէջ, կամքի մէջ, և սրտի թա-գուն փափակների մէջ․ և թէ ամէն ծուռ խորհուրդ օրէնքըն քանդում է․ և թէ ամէն գարշելի փափակ մեղք է․ և թէ ամէն դատարկ բանի հա-մար որ մարդիք կը խօսեն, պատաս-խան պիտի տան դատաստանի օրումն, (Մատթ. ժբ. 36,) էն սարսափելի օրումն, երբ որ սրտերի քննօղն աստ-ուած մեր սրտի ծածուկ խորհուրդ-ները կըդատէ։ Ա՛յ ինձ. քանի՞ դատարկ մտածմունքներ անցկացան

իմ մտքովս և ես նորանցից ամէն մէ-
կին համար իսկի ճշմարտապէս միտք
չարի, թէ էս մեղք է։ (Յովհ. Դ. 5.)
Քանի՞ շատ դատարկ բաներ խօսե-
ցի ես ամէն օր առանց հոգս անելույ,
թէ նորանց ամէն մէկին համար պի-
տի պատասխան տամ։ (Մատթ. ԺԲ.
36։) Ո՞րք բռնադատեցին ինձ էն
չար մտածմունքներն, խօսքերն և
գործքերն՝ որ սրտի խորութենէյն
ցաւալի ձայնով աղաղակեմ. ով աստ-
ուած ողորմիր ինձ մեղաւորիս։ Եթէ
օրէնք բանդերն՝ մեղք լինի, այսինքն՝
եթէ ամէն պակասութիւն որ էն օ-
րէնքումն խնդրուած կատարելութե-
նէյն խորհրդով խօսքով և գործքով
պակասած գործովիմ. ասամեմ եթէ
էն ամէն պակասութիւնն մեղք լինի,
ինչպէս որ էն բան անելն որ օրէն-
քըն արգելում է. ապա քանի՞ բանի
համար պիտի պատասխան տամ ես,
որ լինի թէ նորանց համար իսկի
մին ժամանակ միտք չարի։ Եւ ես
ամէնին վերայ շատ անգամ խոստա-
վան եղայ թէ մենք արինք էն՝ որ

արժանի չէր մեղ անել, և թողինք էն՝ որ պէտք էր մեղ անել։ Նշ՛ խակի աւողջութիւն չըկայ մեղանում։ Վա՜յ ինձ, ինչու որ աստուծոյն անարգեցի, մենակ պաօշներով խոստովան լինելով էն՝ որ իսկի չըհաւատացի և չիմացայ իմ սրտումս։ Արա համար ով Տէր հիմիկ ղարթնայրու իմ խղճմտանքըս որ ճանաչեմ, և միտքս աւնեմ. թէ մեղքն ինչ է։

## ԵՐՐՈՐԴ ՔԱՐՈԶ։

Ամենքն մեղանչեցին և աստուծոյ փառքիցն պակասեցան։ (Հռով. Գ. 23։)

Ամենքն մեղանչեցին. ուրեմն դու էլ՝ իմ սիրելի կարդացօղս, և ես ինքըս էլ։ Մեղանչեցինք, էն է՝ աստուծոյ օրէնքէյն դուրս եկինք, և նորան քանդեցինք. ինչու որ ոչ ով չըկայ արդար իսկի մինն էլ չէ. (Հռով. Գ, 10.) ոչ ով չըկայ որ աստուծոյ օրէնքըն պահած լինի։

Մենք նորա բարոյական օրէնքի

ամէն պատուիրանքներիցն դուրս եկինք և նորանց քանդեցինք, թէ գործքով, թէ խօսքով, կամ թէ չար ցանկութենով] Այս յանդիմանութիւնս շատ ծանր է, բայց էս սաստիկ վճիռն ամէն կողմանէ ճշմարիտ է։ Թող սըրտի մտօք քննենք էս բանըս, աստուծոյն աղաչելով, որ մեր միտքըս լուսաւորէ։

Նըկէք էն տասն պատուիրանքներըն ձեր ձեռներդ առէք, և կարդացէք։ Մենք առաջին պատուիրանքըն քանդեցինք՝ ուրիշ բաներին աւելի յուսալով՝ և ուրիշ բաներըն աւելի սիրելով քան թէ աստուծոյն։ Ինչու որ՝ գրված է. թէ սիրէր քո Տէր աստուծոյն քո բոլոր սրտովդ. (Մատթէ. 37։) Բայց մենք սորանում պակասված ենք գտնըվում։ Երկրորդ պատուիրանքըն էն ձեւին է մօտիկ տալիս՝ որ նորանով պէտք է աստուծոյն պաշտել. չէ թէ միայն դըսի կերպարանքով և արարողութիւններով, բայց մանաւանդ հոգով և ճշմարտութենով։ Ապա վայ մեզ. քանի

պակասաւոր ենք եղել էն հարկաւոր մտադրութենիցն, էն ներքի խոնարհութենիցն, և հոգոյ էն ջերմեռանդութենիցն, որ նորա պաշտօնն է խնդրում մեղանից: Աստուած նախանձոտ աստուած է: Դուք ասումէք, թէ խելի մին ժամանակ անխրաւի պէս անխծելով և սուտ երդում ուտելով չըմեղանչեցինք, և սորանով կարծումէք թէ երկրորդ պատուիրանքըն պահած լինինք: Բայց ասացէք ինձ՝ մի թէ ձեր աղօթք անելոյ կամ սուրբ գրքերըն կարդալոյ ժամանակումն խելի չըթողիք աստուծոյ սուրբ անունըն ձեր պռօշներումը անոյ կենալ առանց ահով իմանալոյ և միտք անելոյ՝ թէ ինչ է էն որ անումէիք. կամ հենց էլ առանց միտք առնելոյ էն անունըն որ պռօշներով յիշումէիք: Բայց Տէրն սուրբ և անմեղ չի համարիլ էն՝ որ նորա անունըն ունայն բաների վերայ է դնում: (Ելք. Ի. 7:) Մի թէ բոլոր շաբաթըն միշտ գործ ածեցիք հենց էնպէսի բարեպաշտ վարժու-

թիւններով և գործքերով, որ չոր-
րորդ պատուիրանքն հրամայումէ. և
աստուածպաշտութեան վարժութիւն-
ներըն և գործքերըն էլ էնպիսի
ջերմեռանդութենով կատարեցի՞ք,
որ օրէնքն իսկի մին բան չունենայ
ձեզ մեղադրելույ խորհրդով, կամ՝
խօսքով, կամ թէ գործքով էլ:

Ով մեղաւոր մարդ քո ձեռըդ
դի՛ր քո բերանիդ վերայ և խոստո-
վանի՛ր քո անձիդ համար, որ մեղա-
ւոր ես: Ասա մի թէ պէ՞տք է ինձ
որ երկրորդ տախտակի պատուիրանք-
ներըն էլ մին մին քննեմ և ձեր ա-
ռաջիդ դնեմ: Մի թէ դու ընկե-
րըդ քո անձիդ պէս սիրումե՞ս. մի
թէ ամէն մարդկանց էնպէս ա-
րե՞ր. ինչպէս որ դու կամենումէիր
որ նո–րանք անեն քեզ: Մի թէ
իսկի մին ժամանակ չըմեղանչեցիր
քո ծնօղիդ անհնազանդ լինելով:
Չե՞ս գիտում որ ամէն զուր բար-
կութիւնն մարդասպանութիւն է.
(Մատթ. Ե. 22:) և թէ ամէն պիղծ
և գարշելի ցանկութիւնն շնութիւն

է. (Մատթ. Ե. 28.) և թէ ծածուկ նենգութիւնն և խաբէութիւնն, և քո կարողութեան պէս աղքատներին օգնութիւն տալ ոչ անհոգութիւնն, գողութիւն են. և թէ ամէն մտածմունք որ սիրոյ հակառակ է՝ իններորդ պատուիրանքըն քանդումէ. և թէ ագահութեան ամէն փափակն և ցանկութիւնն տասներորդ պատուիրանքին դէմ մեղք է: Իրաւի մենք ամէնքս մեղանչեյինք անելով էն՝ որ օրէնքն արգելումէ, և չանելով էն՝ որ օրէնքն հրամայումէ: Ուրեմն ես ի՞նչ արի, և ի՞նչ չարի: Ամէնքն մեղանչեցին: Ուրեմն իմ վիճակս ի՞նչ է. մեղանչականութեան և ողորմելութեան վիճակ է: Ապա ինչու համար չիմացայ էն մինչև հիմիկ: Նրա համար որ՝ մեղքն իմ աչքերըս կուրացրուց, որ ճշմարտութեան լոյսըն չըտեսնեմ:

## ՉՈՐՐՈՐԴ ՎԱՐՈՑ.

Անիծեալ լինի ամէն մարդ՝ որ օրէնքի գրքի միջի ամէն

դրվածներումն չըկենայ՝ որ ամէնըն անէ։ (Գաղատ. գ. 10.)

Ի՞նչ է նշանակում էս ահաւոր բառս՝ անիծեալ։ Աստուծոյ անէծքն նորա արդար բարկութեան և սըրտմտութեան յայտնութիւնն է՝ մեղքերի և մեղաւորների դէմ։ Ո՞վ է կարօղ նորա առաջին մնալ, թէ որ նա բարկանայ։ (Սաղմ. հե. 8։) Բայց ո՞վ է անիծված. ամէն մարդ՝ թէ աղայ թէ ծեր, թէ մեծատուն թէ աղքատ, թէ գիտուն թէ ռզէտ, որ իրան կեանքի բոլոր ժամանակներումն և ամէն բանի մէջ չըպահպանվի որ առանց դադարելոյ, սխալմունքի կամ պակասութեան, ամէն բաներում, թէ խորհրդով, թէ խօսքով, և թէ գործքով, կատարելապէս էն անէ, որ օրէնքն խնդրումէ. և էլ իրան անձըն իսպառ ազատ պահէ էն բաներիցն՝ որ օրէնքն դատապարտումէ. ուրեմն որ կարճ ասեմ էն ամէն մէկն է անիծված, որ չըկենայ օրէնքի գըրքի միջի ամէն գրվածներումն որ ամէնըն անէ։ Նաև օրէնքըն չէ թէ դըրսի արարողութեան պէս, բայց իրան

հոգևոր և շատ գերազանց նշանակու-
թեան և մեկնութեան պէս իմանալ
պէտք է։ Ո՞չ էլ միտքդ բե՞ր՝ թէ մին էլ
ասումէ․ (Յակ․ Բ․ 10․) թէ ով որա-
մէն օրէնքըն պահէ, և մին բանում մե-
ղանչէ, ամէն օրէնքին էլաւ պարտական։
Ապա հիմիկ լաւ քննիր՝ թէ էլա՞ւ
մին օր, կամ մին ժամ՝ (սահաթ,) կամ
թէ սահաթի մին րոպէ՝ որ նորանում
քո միտքդ սիրտդ խօսքդ և գործքդ
էնպէս գնալու, ինչպէս որ օրէնքն
խնդրումէ։ Բայց անէծքն էն, օրէն-
քումն հաստատուած է ամէն մարդոյ
վերայ որ ամէն օրէնքըն չըպահէ,
ամէն մեղաց համար, որ լինի, չէ
թէ մենակ ամբարշտութեան մար-
դասպանութեան, շնութեան, և ուրիշ
էսպէսի խիստ ծանր մեղքերի համար,
բայց էլ ամէն մեղաւոր մտածմունքի
համար, և ամէն սահաթի և րոպէի
համար, որ նորանում պակասած
գնալու քո Տէր աստուծոյն քո բոլոր
սրտովդ, և քո բոլոր անձովդ սիրե-
լուցն։ Ուրեմն օրէնքն քանի՞ շատ
անէծք է հաստատել քեզ և ինձ հա-

կաւակ։ ՙՆա տարուց տարի աստու-
ծոյ բարկութիւնըն մեզ դէմ յայտ-
նումէ. որովհետև մենք տարուց տա-
րի աստուծոյ դէմ մեղանչումենք։ Ա՛-
սա. չէ՞ որ էսպէս է։ Կարող ես սուրբ
գրքերիցն մին վկայութիւն բերել և
հաստատել, թէ սուտ լինի։

Ապա ի՞նչ։ Մինթէ ամէն մէկ մե-
ղաւ որ անիծվա՜ծ է ամէն մէկ մեղքի
համար. և ես էլ մի թէ իմ ամէն
կեանքումս անպակաս մեղք արի՞։
Ճշմարիտ է, որ իսկի աստուծոյն ան-
կեղծ սիրով չեմ սիրել և թէ իսկի
նորա սիրոյն խղճմտանք չեմ արել
հենց մին խորհրդոյ, խօսքի, կամ
գործոյ համար, և թէ իսկի մին պար-
տաւորութիւն չեմ կատարել, կամ
մին մեղքից հրաժարվել եմ, միայն
չ լսակ պատճառի համար՝ որ է աս-
տուծոյ սէրն։

Մինթէ իմ կեանքս մենակ չարու-
թեան անդադար ճանապարհ էլա՞։
Ապա ուրեմն իմ վիճակս կորուստի
և դատապարտութեան վիճակ է. Ո՜վ
քանի՞ ահաւոր է էս խօսքս. Որքա՞ն

յայտնի վկայումեմ ես ամէնն՝ որ իմ միտքս խաւարւած է և իմ սիրտս պղտորացած: Որքա՛ն մեծ է իմ կուրութիւնս և խստութիւնս՝ որ կարող եմ հենց մին սահաթ էլ աստուծոյ անէծքի տակն մնալ և անհոգութենով հանգիստ լինել. որ էլ կարող եմ առանց դողալոյ և վախենալոյ քուն մտնել և վեր կենալ. որովհետև աստուծոյ անէծքն մեղաւորըն դժոխքի մեջ պիտի քցէ:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ:

Մեղքի պաշարն մա՛հ է: Հռոմ. Զ. 23:)

Մեղքն անօրէնութիւն է, և անօրէնութիւնն օրէնք քանդելն է. ինչու որ քանդումէ հենց էն օրէնքըն որ աստուած մարդկանց համար իբր ամէն իրաւունքի յաւիտենական կանոն հաստատեց. էս է աստուծոյ բարոյական օրէնքըն: Մեղքն է՝ ամէն մեղքըն և ամէն մէկ մեղքն, որ նորանց համար աստուծոյ բանն էստեղ խօսու-

մէ։ Մա՛հն, ինչ որ էդ բառդ էլ նը-շանակէ, արդար և հաստատ հաստուցումն է ամէն մէկ մեղքի համար, որ խորհրդով, խօսքով և կամ՝ գործքով կատարվեցաւ։ Բայց մահն ի՞նչ է։ Մարմնոյ մահն էն է՝ որ մարմինն հոգուցն բաժանվըումէ։ Դու մեղաւոր ես, և հենց հիմիկ մեղքի էս պըտուղներըն տեսնումես էն ամէն ցաւերումն տանջանքներումն և հիւանդութիւններումն, որ քո մարմինըդ տկարացնումեն և դէպի գերեզմանն են քաշում։ Դրաւի որ հենց հիմիկ ամէն օր մեռնումես դու։

Մարմնոյ մահն, կամ նորա հոգուց բաժանվելն՝ յետ կըդարձնէ նորան դէպի հողն որ տեղից որ առած է։ Բայց մահն էստեղ մեր բնաբանի մէջն մին շատ աւելի սաստիկ բան է նշանակում, այսինքն հոգոյ մահըն։ Նա էն ի՞նչ է։ Նա էնքան աւելի ահաւոր է քան թէ մարմնոյ մահն, որքան որ հոգին շատ աւելի պատուական է քան թէ մարմինն։ Պատճառն որ՝ հոգոյ մահն էն է, որ հո-

գլին աստուածանից, ինչպէս իրան կեանքի և երանութեան աղբիւրից բաժանվումն է։ Եթէ սրանից անդադար մեղք են գուրս գալիս, որովհետև աստուծոյ շնորհքն հեռացաւ. և այս առաջ կամ հետոյ էնպէսի նեղութիւն է ծագում հոգոյ մէջն. որ ինքըն իրան չարչարէ. ինչու որ՝ աստուծոյ լոյսն և սէրն և բարեկամութիւնն, և նորանից կախված ամէն շնորհքներն կորան նորա սրտումն։ Այս առանց աստուծոյ հոգին մեռած է. այսինքն խաւարն և մեղքն անդադար տանջումն նորան. պատճառն որ՝ աստուած հոգոյ համար կեանքի յատուկ աղբիւրն է, ինչպէս որ հոգին մարմնոյ կեանքին պատճառ է։ Ուրեմն հոգևոր մահըն, կամ հոգոյ մահըն էնպէս իմանաս՝ որ ոչ թէ խղճմտանքի կամ ներսի ըզգացութեան կորուստ է, բայց աստուծոյ պատկերի և սիրոյ կորուստ է։ Պատճառն որ՝ նորա սէրն կեանք է, և և նորա բարկութիւնն մահ. (Սաղմ. իթ. 6։) Այս իմ սիրելի մեղաւոր

ընկեր՝ եթէ դու աստուծոյ ես շը-
նորհքումն որ մեղաւորին նորա մօտ է
դարձնում, դեռ կենդանացած չես,
ապա էս է քո վիճակը։ Դու մե-
ռած ես յանցանքներով և մեղքերով.
և եթէ աստուծոյ հոգոյ ձեռովն որ
պիտի տրվի քեզ, չըկենդանանաս,
քո էս կեանքիցս փոխվելուցն առաջ.
ապա պէտք է որ յաւիտեան մնաս
էս ողորմելի վիճակիս մէջն։

Ինչու որ՝ մահն, որ նորա համար
էս տեղ մեր բնաբանն խօսումէ, էն
յաւիտենական կեանքին դէմ դրած է,
որ նորան պօղոսն հետեւօղ խօսքի մէ-
ջըն յիշումէ։ Այս մեղ. ինչու որ՝ էս
հոգևոր մահս անասելի խեղճու-
թիւն է բերում մեզ վերայ հենց
հիմիկ էս կեանքումս, ինչպէս որ ա-
մէն մարդոյ փորձառնին վկայումէ
եթէ ճշմարիտըն խոստովանի։ Ապա
ի՞նչ պիտի լինի նոր գալու աշ-
խարհքումն, որ յաւիտենական է։
Այս. Ով է կարող էն յայտնել։ Մենք
կարդումենք թէ Քրիստոսն խօսու-
մէ որդնի համար՝ որ իսկի մին ժա-

մանակ չի մեռնիլ և խելքը չի դա-դարիլ խղճմտանքներըն կծելուց և տան-ջելուց. և կրակի համար՝ որ խելքի մէն ժամանակ չի ջնջվիլ և դադա-րիլ մարմինըն հոգույն հետ դժոխ-քումն ապականելուց. և էլ լաց լի-նելոյ և սուգ անելոյ, և ատամնե-րըն կրճտացնելոյ համար. և էս ա-մէնը յաւիտեան մնալու է։

Ապա թէ որ էնպէս լինի՝ մի թէ պատիժն անհաւասար չէ՞ յանցանքին։ Թող Աստուած արդար լինի, և ա-մէն մարդ սուտ։ Նա ասումէ՝ թէ պաշարըն, այսինքն մեղքերի արդար հատուցումն՝ մահ է։ Աստուծոյ ար-դարութիւնն ստիպումէ իրան. որ ի-րան ապաւնաւիքըն և վախ տալըն հեռուց էնպէս էլ կատարէ, ինչպէս որ իրան խոստմունքըն։ Ո՛վ փախնէք էն բարկութենից որ գալու է։ Պատ-ճառն որ՝ մեզանից ո՞վ է որ կարե-նայ մշտացնօղ կրակի մէջ բնակվիլ. կամ թէ մեզանից ո՞վ է որ կարենայ յաւիտենական բոցի միջումն բնակ-վիլ։

# ՎԵՑԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ։

Ես ի՞նչ պէտք է անեմ որ ապրիմ։ (Գործ. ԺԶ. 30.)

Այս է զարթնացած մեղաւոր մարդոյ ցաւալի հարցմունքն և քննութիւնն։ Զարթնացած մեղաւոր ասելով՝ ես էն մարդըն եմ իմանում, որ գիտենայ՝ թէ մեղքն ի՞նչ է. որ էլ ցաւալի սրտով իմանայ՝ թէ ինքն մեղաւոր է. և թէ նրա համար աստուծոյ անէծքի տակն է, և դժոխքի կրակին մէջ քցվելոյ արժան է։ Ապա հիմիկ հարցնումեմ՝ մի թէ դու զարթնացած մեղաւոր ես. Այն որ՝ ամէն մարդիք առ հասարակ միշտ քնով վէր ընկած են. և ոչ ով չըկայ որ իրան մօտաւոր կորուստըն իմանայ. և էնպէս կենումեն ննումեն մինչև որ աստուծոյ խօսքովն և սուրբ հոգւոյ ձեռովն վեր շարժվին իրանց մարմնական թմրութենիցն։ Նորանք իրանց անձներին համար միշտ աղաղակումեն՝ խաղաղութիւն խաղաղութիւն, երբ որ էնտեղ խաղաղու-

թիւն չըլլայ. պատճառն որ՝ աստուած հաստատ է ասել. (Առակ. Խը. 21։) թէ ամբարիշտներին խաղաղութիւն չըլլայ։ Նորանք իրանց օրերըն անց են կացնում. օրէցօր մահըն, դատաստանըն և յաւիտենական աշխարհքըն հեռու քցելով իրանց մտքիցն, որ խելք չը յիշեն նորանց. և խելք մին ժամանակ էլ աստուածաշունչ գիրքերըն չեն կարդում ջերմեռանդցանկութենով, որ իմանան, թէ իրանց վիճակն ինչ է. և խելք մին ժամանակ իրանց սրտի խորութենիցն էլ չեն աղաղակում. թէ աստուած ողորմիր ինձ մեղաւորիս։ Այլ թէ և լինի, որ էս խօսքըս ասեն՝ մենակ պռօշներով են ասում և ոչ թէ մըտքով և սրտով։ Ապա եթէ դու քո կեանքըդ դեռ էնպէս վարես՝ որ խեկի ջերմեռանդ աղօթք չանես դէպի աստուած, ողորմութիւն գտնելու համար. եթէ դեռ օրէցօր անհոգ ես աղօթք անելու համար. ապա կոտարելապէս ցոյց ես տալիս, թէ աստուծոյ կեանքիցն օտարացած ես՝ էն

տգիտութենոյն որ քեղցնում է, ինչ-
պէս նա որ լրան օրերըն մեծ անա-
ռակութեան մէջ է անց կացնում
Բայց երբ որ աստուած կամենայ
մարդիս սրտի մէջ Ճշմարտութեան
Լոյսըն հաստատել, և նորա խղճմը-
տանքըն զարթնացնել, էն ժամանակն
վեր է կենում իւր քնէ թմրութե-
նէյն: Ապա նա տեսնում էն, որ ա-
ռաջուց չիմացաւ. այսինքն թէ՝ քա-
նի չար և դառն է աստուծոյ դէմ
մեղանչիլըն: Նա Ճշմարտութեան լսօս-
քի մէջըն կարդում է՝ թէ ամբա-
րիշտն պիտի դառնայ դժոխքն և էն
ամէն հեթանոսներըն որ աստուծոյն
մոռանում են. (Սաղմ. Թ. 18:) և էն
կարդալովն սկսում է դողալ: Էն ժա-
մանակումն խոստովանվում է, թէ ի-
րաւի որ ես աստուծոյն մոռացել եմ,
և նորա դէմ մեղանչել եմ. և հաս-
տատ իմանալով՝ թէ մեղքի պաշարն
մահ է, ցաւալի սրտով հարցնում է՝
թէ ինչպէս պիտի պրծնեմ ես դը-
ժոխքի դատապարտութենիցն:

Էնպէսի մարդն բոլոր սրտի ցան-

կուլթենով հարցնումէ և քննումէ՝ թէ ես ինչ պէտք է անեմ որ ապրիմ։ Պատճառն որ՝ նա իմանումէ թէ շատ վախ կայ, որ Լինի թէ իրան համար խապա փրկութիւն չըգտնէ մինչև յաւիտեան։ Աշխարհքն իրան ամէն բարիքներովն շահերովն և փառքովն անհամ և անախորժ է դառնում նորան. ինչու որ՝ չի կարող նորա ցաւով Լցված սրտին հանգիստ տալ, և ոչ նորա խոցոտված խղճմըտանքըն բժշկել. Նապա սկսումէ աղօթք անել. և նորա աղօթքն հիմիկ նորա սրտի յատուկ խօսքն է. և չէ թէ ենպէսի դրսի արարողութիւն և ծառայութիւն, ինչպէս որ առաջուց էր։ Իրան կորուստըն իմանալով նա վազ է անում, որ շնորհաց աթոռին մօտ գայ. և աստուծոյ խօսքըն կարդումէ ինչպէս յաւիտենական ճըշմարտութեան վճիռըն. և էլ ենպէս կարդումէ՝ ինչպէս թէ դրվածքի ամէն մէկ խօսքերըն իրան անձին համար Լինին դրված։

Ով մեղաւոր մարդ, միթէ դու մին

ժամանակ ես հարցաքննութիւններըս ծրիր. թէ ես ի՞նչ պէտք է անեմ որ ապրիմ:

## ԵՕԹ՛ՆԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ:

Ապաշխարեցէք՝ և աւետարանին հաւատացէք: (Մարկ. ա. 15:)

Սորանք են մեր օրհնված փրկչի ճշմարիտ խօսքերըն, որ նա ողորմելի և պատժապարտ մեղաւորներին համար ասել է՝ ինչպես որ ես և դու ենք: Բայց ապաշխարութիւնն ի՞նչ է: Քրիստոսի հոգու ներգործութիւնըն է մարդու սրտի մէջն, որ նորանով մեղքերի չարութիւնըն և պատժապարտութիւնըն էնպէսի ներսի լուսով է ցոյց տալիս՝ մինչև որ մարդն զարմանում՝ թէ ինքն ի՞նչպես դեռ դժոխքի ներքևն չէ ընկել. և մեղքերի դէմ էնպէսի թշնամութիւն է շինում, որ մարդըն շարժայնումէ էն իսպառ թողելու. և մեղաց պատիժների համար էնպէսի վախ՝ որ

մարդը յօժար է անում, որ բոլոր
սրտով կամենայ և ցանկանայ փրկվիլ
և էն էլ միայն և խապու էն գործ-
քերի և չարչարանքների ձեռովը՝ որ
Յիսուս Քրիստոս կրած հոգինե-
րին համար արել է և քաշել։ Ն.-
պաշխարօղ մեղաւորն հաստատ ձա-
նաչումէ և իմանում. թէ մեղքն
պէտք է պատժվիլ, և թէ նա ինքն
էնպէսի մեղաւոր ըլնելով՝ աստու-
ծոյ բարկութեան տակն է. թէ մեղ-
քըն պէտք է կամ պատժվի և կամ
թողվի. և թէ ինքն կարօղ չէ իրան
շատ փոքր յանցանքի և մեղքի փոխա-
նէլ վճարել. և ապա թէ սրա համար
իրան ամբողջ փրկութիւնն խապու
պէտք է շնորհաց ձեռովն ըլնել։ Նա-
պէս խոնարհված մարդն պատրաստ-
ված է, որ ուրախութենով ընդունի
էն փրկչի համար էլած աւետիքներըն
որ եկաւ կորած մեղաւորներին խնդրելոյ
և ազատելոյ համար. (Մատթ. ժը.
11.) ինչպէս որ Քի աւետարանն է,
Նա է ուրախացնօղ աւետիքն կորած
և պատժապարտ աշխարհքի համար.

Նորա գլխաւոր վարդապետութիւնն
և քարոզութիւնն էս է՝ թէ Յիսուս
Քրիստոս աշխարհք եկաւ որ մե-
ղաւորներըն ապրեցնէ. (ա. Տիմ. ա.
15։) Նա մեռաւ որ նորանց մեղքե-
րի համար վճարէ, և որովհետև էն
մին Քրիստոսն աստուած և մարդ
է բոլորովին կարօղ է կենդանի ա-
նել նորանց որ նորանով մօտենումեն
աստուծոյ մօտ։ (Եբր. է. 25։) Պատ-
ճառն որ նորա արիւնն անչափ
պտղաբեր էր. ինչու որ՝ մարդ եղած
աստուծոյ արիւնըն էր. (Գործ. ի.
28։) և հենց նրա համար թափվե-
ցաւ, որ մեղքերըն վէր առնէ։ Նրա
համար ո՛վ ողորմելի մեղաւոր մարդ
որ ինքդ քո անձըն ես դատապար-
տում թէ և քո մեղքերդ թուով
աւելի լինին քան թէ քո գլխի
մազնի, կամ քան թէ ծովու եղրի
(շեաշէ) աւազնի, և թէ և մեծ և
ծանրացած լինին. և ինչպէս կար-
միր որդան (ղրմըզ՝) բայց էնպէս էլ
ձյուն կայ. ինչու որ Յիսուսի Քրիս-
տոսի արիւնն սրբումէ ամէն մեղքե-

րից այսինքն՝ էնքան զօրութիւն ունի
որ ամէն մեղքից կարենայ սրբել. (Ա.
Յօհ. Ա. 7։) Բայց էս փրկութեանս
ես ինչպէս պիտի մասնակից լինիմ,
կամ էն մխիթարութիւնքն որ սո-
րանում է ինչպէս պիտի ստանամ։
Հաւատս աւետարանին և վստահ-
դիր էն խօսքերի վերայ, որ աստու-
ծոյ բանն Յիսուսի Քրիստոսի հա-
մար, նորա յօժարութեան և զօրու-
թեան համար ասումէ. որ կամենու-
մէ՝ և հենց էլ կարող է մեղաւորնե-
րըն փրկել։ Բայց կարելի՞ է որ
հենց ես էլ համարձակ հաւատամ
թէ Յիսուս Քրիստոս աշխարհք
եկաւ որ էնպէսի անպիտան և ողոր-
մելի մարդ ապրեցնէ՝ ինչպէս որ ես
եմ։ Հա՛ կարելի է՝ ինչու որ՝ էս է
աստուծոյ պատուիրանքն, որ դուք հա-
ւատաք նորա որդւոյ Յիսուսի Քրիս-
տոսի անունին. (Ա. Յօհ. Գ. 23։
Ապա ուրեմն կարելի չէ որ հա-
մարձակութիւն կամ լրբութիւն հա-
մարվի էն բան անելն՝ որ աստ-
ուած հրամայել է. և աստուածանից

են խնդրելը որ ի՞նչ իրան խօսքովն խոստացել է տալ մեզ։

## ՈՒԹԵՐՈՐԴ ԲԱՐՕՔ։

Ճշմարիտ է էս խօսքս՝ և ամէն կողմանէ արժանի ընդունելոյ՝ որ Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ մեղաւորներըն փրկելոյ որ նորանց գլխաւորն ես եմ։ (ա. Տէմ. ա. 15.)

Էհա էս է բոլոր աւետարանի գլխաւոր խօսքն և վարդապետութիւնն։ Յիսուս Քրիստոս աստուած է. նա ստեղծեց աշխարհքըն և էն ամէնըն որ նորանում է. ինչու որ՝ ամէն բան նորանով և նորա համար հաստատվեցաւ. (Տէ՛ռ. յօհ. ա. 3։ Կողո. ա. 16.) Բայց մենք նորա ըստեղծվածներս նորա օրէնքըն քանդեցինք, և նորանից ապստամբվեցանք։ Նրա համար արդարութեան օրէնքին պէս նա կարող էր մեզ դըժոխքի մէջ քցել էն լծի (հէօւէ) մէջ

որ կրակով և ծըծմբով (կիւ—կիւ—րթով) այրվում է։ Բայց՝ որքան զարմանալի է նորա սէրն։ Աստուած մարմնոյ մէջն երևեցաւ, և աշխարհքի մէջ ծնվաւ։ Ի՞նչու համար. մեղաւորներըն ապրեցնելոյ համար։ Ա՛յ ինչպէս ապրեցրուց նորանց. խաչի վերայ նորանց համար մեռնելով, և նորանց մեղքերըն փայտին վերայ իրան մարմնոյն վեր առնելով. և հենց իրան արիւնովն նորանց իրանց մեղքերիցն լուանալով։

Դու ես մի թէ մին ժամանակ աստուծոյ էս զարմանալի սէրս մըտքըս առի՞։ Դու մեղաւոր ես, և մեղքի մէջ ծնված. և նրա համար յաւիտենական պատժի տակն քցված։ Բայց Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ որ մեղաւորներըն ապրեյնէ. հենց էնպիսիներըն՝ ինչպէս որ ես ինքս եմ։ Մի թէ մին ժամանակ բոլոր սրտով աղաչեցի՞ նորան՝ որ ինձ ապրեցնէ։ Մի թէ հաւատումեմ, թէ ես ողորմելի մեղաւոր եմ։ Մի թէ էն միտքս եմ առնում և

լաց եմ լինում նրա համար։ Ո՛չ մի թէ հաստատ իմանումեմ, թէ աչոք է որ մինչև յաւիտեան դատապարտված լինիմ, թէ որ Քրիստոս չըփրկէ ինձ։ Այո՛. քանի՜ շատ մարդիք կան՝ որ իսկի չեն մօտենում Քրիստոսի մօտ որ փրկէ նորանց։ Քանի՜ շատ մարդիք խաղաղ անհոգ և անփոյթ են էն փրկութեան համար որ Յիսուս Քրիստոս մեղաւորների համար պատրաստել է։ Բայց մի թէ ես ինքս էս միտքս առի՞. Մի թէ իմ ամէն յոյս հաստատված է Սս Աշխարհի խօսքիս վերայ՝ թէ Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ որ մեղաւորներին փրկէ։ Օ՜հ քանի՜ սիրտ տուող խօսք է էս։ Ուղորդ որ ես մեղաւոր եմ, և մեղաւորների գլխաւորն, բայց ինձ համար էլ կարելի է որ էն մեղքից փրկվիմ որ ես գործել եմ. և էն դժոխքից ազատվիմ որ նորան ես արժանի եմ էլել. միայն թէ սրտի զղջութենով իմ չարութիւնըս ճանաչեմ, և հաւատքով մօտիկ գամ Յիսուս Քրիս-

տոսին, և նորա վերայ իմ յոյսըս դը-
նեմ։ Ո՛հ երանի թէ սուրբ Հոգին
զօրացնէ ինձ որ ճանկ տամ Յիսու-
սին։ Ա՜յ ինձ ի՞նչ պիտի անէի ես
աղքատ անպիտան, և ողորմելի մե-
ղաւոր, եթէ Յիսուս չըլլար որ
փրկէ ինձ։ Քանի՞ ուրախութենով
և խնդութենով պէտք է ինձ էսպէսի
ուրախացնող աւետիքներըս ընդունել
Իրաւի որ էս խօսքս ամէն կողմանէ
արժանի է ընդունելու. և հենց ա-
մէնին վերայ էլ պարտաւորութիւն
կայ որ ընդունեն նորան, որովհետև
ամէնքն մեղանչեցին, և փրկութեան
կարօտ էլան. և ամէնքն էլ որ ի-
րանց կորուստըն իմանումեն, կարօղ
են գալ նորա մօտ՝ որ կարօղ է նո-
րանց փրկել։ Ո՛վ Տէր՝ սուրբ Հոգի
զօրացրու ինձ էնպէս հաւատալ. որ իմ
հոգիս էն հաւատքի ձեռովն փրկվի։

# ԻՆՆԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ։

Էն որ ինձ մօտ է գալիս՝ ես
դուրս չեմ հանիլ նորան (Յօհ.
Զ. 37։)

Ո՞հ քանի՞ սաստիկ սիրով ցաւակից և ողորմած է կորած մեղաւորների սիրելի բարեկամն։ Որքան ինքն հոգայօղ է, որ ամէն արգելմունք և խափանմունք դէն քցէ էն քննօղ հոգոյ ճանապարհից որ յօժար է լաւ աւետարանական պայմանին պէս փըրկվիլ. էս է շնորհքով՝ հաւատքի ձեռովն. (Եփես. բ. 8։) Քանի՞ մարդասիրութենով ցոյց է տալիս էսպէսինների բնութիւնըն և ներսի միտքըն և շարժմունքներըն՝ որ իսկի մինչև յետ չըքաշվիլի վախով և իսկի չըյուսահատվի. և աստուածային ողորմութեան ամէն քաղցրութենովն հենց ինքն կանչումէ նորանց որ իրան մօտ գան. Լսեցէք նորա յատուկ խօսքերըն որ ասումէ. (Մատթ. ժը. 28։) Դէ ինձ մօտ եկէք ամէն վաստակվածներ և բեռնաւորներ՝ և ես հանգիստ կըտամ ձեզ։ Սուրբ հարցնումեմ. մի թէ դուք ճշմարտապէս ծանրացած և վաստակվածէք մեղքի ծառայութենից, և սատանայի և աշխարհքի գերութենից։ Մի թէ

դուք Աշխարհապէս տրտմած էք մե-
ղաց ծանր բեռնովն ձեր խղճմտանք-
ներումն, և դատապարտութեան վա-
խովն ձեր սրտերումն: Ահա մարդա-
սէր փրկիչն կանգնած է և սպասումէ
որ ձեզ իրան գիրկն ընդունի՝ և ա-
հա էս են նորա քաղցր խօսքերն որ
նորա բերանիցն են դուրս գալիս
թէ ինձ մօտ եկէք, և ես հանգիստ
կըտամ ձեզ: Հաւատարիմ է նա՝ որ
խոստացաւ էն. (Եբր. Ժ. 23:) և կա-
րող չէ խաբել ձեզ: Նա չի փո-
խում էն բանըն՝ որ իրան պռօշնե-
րովն դուրս եկաւ: (Սաղմ. ձը. 35:)
Ուրեմն նորա փորձըն առէք. և նո-
րա մօտ եկէք: Նա կարող և կամե-
ցող է փրկելոյ համար. էլ ինչու հա-
մար էք երկմտում:
Բայց դու ասումես՝ թէ մեղաւոր եմ
ես. ապա յայտնի լինի քեզ՝ որ Յի-
սուս Քրիստոս ամենակարող փրկիչ է:
Դու էլ ասելլի հաւատումես՝ թէ
շատ ժամանակ է որ ես համարձակ
ապստամբված նորանից խպառ մեղ-
քին և սատանային ծառայեցի էս

աշ խարհ.քումս. և թէ շատ սարի է
որ ես կատաղած լրբութենով նորա
առաջին մեղանչեցի։ Բայց թէ և
էսպէս լինի՝ էլ դու դեռ աստուծոյ
ողորմութեան սահմանիցն դուրս չես։
էլ քո վ խձակդ էնքան յուսահատ չէ՝
որ էն մեծ բժշկի խմաստութիւնն և
զօրութիւնն չըկարենայ բժշկել քեզ։
Բայց լինի որ էլ աւելի ասես՝ թէ
ես մեղաւորեմ, չէ՞ թէ հասարակ ձա-
նապարհներին պէս, բայց մեղաւոր-
ների գլխաւորն։ Ապա էս փրկու-
թեան խօսքերս հենց քեզ վերայ է
ուղարկվել։ Պատճառն որ Յիսուսի
արիւնն աստուծոյ արիւն է։ (Գործ.
Ի. 28։) և նորա համար ամէն մեղ-
քից սրբումէ. (Ա. Յօհ. Ա. 7.) Նորա
արդարութիւնն աստուծոյ արդարու-
թիւն է. (Հռոմ. Գ. 22։) և նորա
համար բաւական է շատ ամբարիշտն
էլ արդարացնելոյ։ Արեան չի երկ-
մտես. և չի յուսահատվիս. ինչու
որ՝ քո փրկիչն՝ քո ողորմելի հոգոյ
սիրողն էնպէս է ասում. Նա որ ինձ
մօտ է գալիս, ես դուրս չեմ հանիլ

նորան. և նորա առաջին իսկի ջո-
կութիւն չըկայ. ինչու որ՝ նա չի
ուզում. որ մինն կորչի, բայց որ ա-
մէնքն ապաշխարութիւն գան։ (Բ.
Պետ. Գ. 9.) Բայց կասես դու, մի
թէ պէտք չէ՞ ինձ, որ առաջ իմ
սիրտըս շիտակացնեմ, և իմ կեան-
քըս դէպի լաւն փոխեմ, և ապա հա-
մարձակիլ իմ նորա մօտ գալ։ Ապա
եթէ դու մտիկ տաս և ուշանաս
մինչև որ էս փոփոխութիւնըս քո ան-
ձիդ կարողութենովն կատարես, իմա-
ցի է որ վերջն քո մեղաց մէջն կը-
մեռնիս. ինչու որ՝ դու ինքդ իսկի
չես կարող քո սիրտըդ շիտակ անել.
և քո կեանքըդ դէպի լաւն փոխել։
Պէտք է որ Քրիստոս ինքն քո տե-
ղակ անէ էս, նա ինքն ճշմարտու-
թենով կանէ քեզ համար, երբ որ
նորա խաչին մօտ կըգաս՝ քո մեղքե-
րըն խոստովանելով, և միայն նորա
արիւնին վերայ քո ամէն յոյսըն դը-
նելով որ նորան իբր քո մեղաց ձըշ-
մարիտ և կատարեալ քաւութիւն հա-
ւատքով ընդունիս։ Ապա պէտք է

քեզ որ նորա մօտ գաս հենց էնպես ինչպես որ ես. այսինքն ինչպես ողորմելի և խեղճ մեղաւոր, որ նորա արիւնովը լուացվել իս, և նորա արդարութենովն իբր նոր շորով զարդարվել իս, նորա հոգովը սրբվել իս և ապա պատրաստ լինիս նորա փառացն մասնակից լինելու: Ի՞նչու ես երկմտում ընդունել էն որ նա էնպես ջօժար է տալ քեզ, և էն էլ ձրի և առանց արծաթի, և առանց մեծ գին տալու: (Եսայ. ծե. 1:) այսինքն մեղաց թողութինքը, սրբութինքը և երկնքի արքայութինքը: Պատճառն որ՝ նորա յատուկ գործն էն է որ մեղաւորներին ընդունի. (Ղուկ. ժե. 2:) որ փրկէ նորանց: Նա՛ սրա համար յայտնի ասաց. Թէ նա որ ինձ մօտ է գալիս՝ ով որ լինի, կամ ինչպէս որ լինի, ես իսկի դուրս չեմ՝ հանիլ նորան:

## ՏԱՍՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ:

Մենք որ հաւատքովը արդարացած ենք, աստուծոյ հետ խա-

խաղաղութիւն ունենանք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռօքն։ (Հռով. Ե. 1։)

Տէրն ասում է ամբարիշտներին խաղաղութիւն չը՚կայ։ (Եսայ. ԽԸ. 21։) Պատճառն որ էն մեղաւորն որ դեռ մեղաց թողութիւն չի ստացել չի կարող աստուծոյ հետ խաղաղութիւն ունենալ։

Քանի ժամանակ որ նորա խղճմտանքն դեռ թմրացած է, կարելի է որ նա անհոգ և անվախ լինի։ Բայց երբ որ նորա աչքերն կըբացվի, և նորա սիրտն կըսկսէ իմանալ իրան կորուստըն, էն ժամանակն շուտով կըճանաչէ՝ թէ ինքն ողորմելի է, մինչև որ հենց աստուած ինքն խաղաղութիւն հասցնէ և շնորհէ նորա մեղքով դատապարտուած հոգուն։ Արդարանալըն էն է որ մեղաց թողութիւն ենք ստանում և աստուծոյ առաջին ընդունելի ենք լինում։ Բայց մեղաց թողութիւնըն և աստուծոյ առաջին ընդունելի լինելըն իսկ մին բանով չենք կարող ստանալ

բայց միայն Յիսուս Քրիստոսին հաւատալով՝ որ նա իրան պատուական արիւնովը մեր մեղքերը քաւեց։ Նոյն երբ որ շնորհք տըվվի ինձ որ հաւատամ. թէ Յիսուս Քրիստոս իմ մեղքերըս վեր առաւ, էլ էսկի մին բան չըկայ որ կարենայ իմ խղճմտանքըս խռովացնել։ Ինչու որ՝ էն ժամանակն խաղաղութիւն ունիմ աստուծոյ հետ։ Զարթնացած մարդոյ խռովութիւնն իրան մեղքով դատապարտուած խղճմտանքէյն, և նորա մեղաց ծանր բեռնէյն է դուրս գալիս՝

Ուրեմն երբ որ ողորմելի և վախով բռնված մեղաւորն տեղեակ լինի՝ թէ Քրիստոս հենց էնպէսիներին համար մեռաւ, ինչպէս որ ինքն է։ և թէ Քրիստոս աստուած է որ կարող է մեղաւորներին գլխաւորըն էլ փրկել. և թէ նորա աշխարհք գալըն յատուկ պատճառն հենց էս էլաւ. և թէ՝ նա ինքն ասաց. նա որ ինձ մօտ է գալիս՝ ես դուրս չեմ հանել նորան։ (Յօհ. Զ. 37.) աստու-

մեմ՝ երբ որ ողորմելի մեղաւորն
ես ամէնս իմանայ և հաւատայ, ապա
նա խաղաղութիւն ունի աստուծոյ
հետ. և էն ժամանակն կարող է աս-
տուծոյն իրան հայր կանչել, կարող
է ամէն քանի համար աստուծոյ վե-
րայ իրան յոյսըն դնել. կարող է շատ
ուրախութենով մահի համար էլ
մտածել, և աստուծոյ էն փառաց յու-
սովն ուրախանալ։ Ո՛վ մեղաւոր
մարդ, ասա մի թէ դու էսպէսի ե-
րանելի վիճակումն ես հաստատուած
գտնուեմն որ քեզ փրկութիւն չըկայ
եթէ դու Քրիստոսի հետ մասնակ-
ցութիւն չունենաս. և թէ իսկի մին
բանով աստուծոյ հետ խաղաղութիւն
չըկայ, բայց մէնակ Քրիստոսի ձե-
ռովն. և թէ քո կեանքդ իսպառ ո-
ղորմելի պէտք է լինի և քո մահդ
յաւիտենական խղճութեան և տան-
ջանաց սկիզբն պէտք է լինի, թէ որ
քո մեղքերդ Քրիստոսովն չըթող-
վին քեզ։

Եթէ մտիկ տաս Քրիստոսին ինչ-
պէս մին մէնակ փրկչին, և հենց իմ

անձնիցս յուսահատ էլած փախչիմ նորա մօտ փրկվելոյ համար. ապա աստուած լինձ վերայ էլ չի բարկանալ. և իմ մեղքերն որ շատ էին թողված կըլինին. և իմ անձս ընդունելի կըլինի նորան. և թէ որ պատահի ինձ որ հենց էս գիշերումս մեռնեմ, հաստատ յուսով աստուծոյ մօտ կըգնամ, Ո՜հ քանի՜ երանելի է էս վիճակս՝ որ սրանում իսկի վախենալոյ պատճառ չըկայ ո՛չ կեանքիս մէջն և ո՛չ մահի մէջն։ Ինչու որ՝ նորանում աստուած մեր բարեկամ ունինք, յիսուսըն փրկիչ, սուրբ հոգին մեր մխիթարիչ, մահն մեր բարեկամ, երկինքն մեր տուն, և յաւիտենական աշխարհքըն խաղաղութենով և ուրախութենով լցված և մեր առաջըն դրած։ Ո՛վ մեղաւոր մարդ ասա մի թէ էս է քո հոգոյ վիճակն։

## ՏԸՍ՛ՆՈՒ ՄԻ՛Ն ԿԵՐՕՕ։

Ձեր հաւատացեալներիդ համար պատուական քար է. (ա. Պետ. բ. 7։)

Առաքեալն էս տեղ ողորմելի կորած մեղաւորների սիրելի բարեկամ Յիսուսի քրիստոսի համար է խօսում. նա որ մեզ վերայ ողորմած էլաւ՝ երբ որ մենք մեր մեղքերին ծառայելով մեր անձների վերայ անողորմ էլանք. որ էլ մեր տեղակ մեռաւ՝ երբ որ արդար օրէնքի իրաւունքին պէս արժանի էինք դժոխքի մէջ քցվելոյ:

Ապա հիմի՝ թէ որ հաւատաք թէ ձեր մեղքերն կըդատապարտէին ձեզ, թէ որ քո՞ նորանից իրան անձնումը վեր չէր առել. և թէ պէտք էր ձեզ մինչև յաւիտեան անիծված լինիլ՝ թէ որ քրիստոս ձեզ համար անէծք չէր էլել. և թէ որ խոնարհութենով հաստատ գիտենա՛ք ձեր սրտերումը՝ որ նորա արիւնումը թողութիւն էք ստացել. և թէ որ կարող էք մտիկ տալ նորան ինչպէս թէ հենց ձեզ վերայ կասէր էն՝ որ աւետարանումն էն աղքատ մեղաւոր կնկանն ասաց. (Ղուկ. Է. 48. 50.) թէ գնա խաղաղութենով, քո մեղ-

քերդ թողված են քեզ. ասում եմ. եթե էս ամէնս լինի ձեր սրտումը՝ ապա Քրիստոս պատուական է ձեզ համար, և սիրում էք նորան աւելի քան թէ ամէնըն։ Սիրում էք նորա համար մտածել, նորանից լսել նորանից խօսիլ. և ինչ որ մինանգամ նա պատուիրել է՝ ցանկանում էք էն անել. և ինչ որ մին անգամ արգելեց՝ էն անելուցն խպառ և ամէն աշխարհքըն էլ տանալ։ Ապա դուք հիմիկ նոր ստեղծված էլաք. և կարող չէք էնպէս ապրիլ և վարվիլ ինչպէս որ մին ժամանակով ապրում էիք. պատճառն որ նոր ծնվել էք. Հինն անցկացաւ, և հիմիկ ամէնն նոր էլաւ. (Բ. Կորն. Ե. 17.) Ինչ բան որ մին ժամանակ ատում էիք, ինչպէս որ աղօթքըն, օրհնաբանութիւներըն, քարոզ լսիլն և աստուծոյ խօսքը կարդալըն, հենց էն հիմիկ սիրում էք, և ինչ որ մին ժամանակ սիրում էիք, ինչպէս ունայն խօսակցութիւններըն և ոչինչ փուչ ուրախութիւններըն և ըղբաղմունքներըն, հենց էն հիմիկ ա-

տումէ.ք՝ և յետ է.ք դառնում նո-
րանից, Ոչմիկ կարող չէ.ք քուն
մտնել գիշերումն եթէ առաջ հը-
գոհանաք ձեր ողորմած փրկչիցն էն
ամէն պարգևներին համար՝ որ ցե-
րեկումն տուաւ ձեզ. և էլ եթէ ա-
ռաջ չըյանձնէ.ք ձեր անձներըդ
նորա պահպանութեանն գիշերի պա-
տահմունքներից երեսիցն, և նորա
ձեռքն տաք ձեր հոգիներդ որ՝ եթէ
հենց էս գիշերումս մեռնիք, նա ի-
րան մօտ ընդունի ձեզ իրան արքայ-
ութեան մէջ: Ու՜ երբ որ առաւօ-
տանից վէր կենաք՝ կարող չէ.ք դուրս
գալ աշխարհքի մէջ ձեր օրինաւոր
գործքերըն կատարելու համար, ե-
թէ առաջ աղօթքով չաղաչէ.ք նո-
րան՝ որ պահէ ձեզ աշխարհքի թա-
կարկներից, և սատանայի փորձանք-
ներիցն: Աստուած որ՝ ձեր ցանկու-
թիւնն և փափաքն մինակ էն է՝ որ
հաճոյ լինիք ձեր սիրելի փրկչին:
Ու՜ նրա համար ամէն բաներիցն ա-
ւելի նորան տրտմացնելուցն վախե-
նումէ.ք: Նրա համար թէ ուտէ.ք,

և թէ խմէք, ցանկանումէք ամէնըն, աստուծոյ փառաց համար անել։ (ա. Կորն. Ժ. 31։)

## ՏԱՍՆԵՒՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ։

Հետևեցէք սրբութեանն, որ առանց նորան ոչ ով տէրին չի տեսնիլ։ (Եբր. ԺԲ. 14։)

Աստուած սուրբ Աստուած է։ Քրիստոս սուրբ փրկիչ է. աստուծոյ հոգին սուրբ հոգի է, երկնքի արքայութիւնն սուրբ տեղ է. հրեշտակներըն սուրբ հրեշտակներ են. և աստուծոյ ամէն փրկված ժողովուրդըն սուրբ ժողովուրդ են։ Արդեօք մի թէ ես էլ սուրբ եմ. թէ որ չեմ ահա սուրբ գիրքն վկայումէ ինձ. որ աստուծոյն չեմ տեսնիլը, և հենց էլ չեմ կարող տեսնիլ։ Բայց ես սըրբութիւնս ոչ թէ միայն կեանքի դրսի բարեգործութիւն և բարեձևութիւն է. ինչու որ՝ դրսի բարեձևութիւնն էն տեղ էլ կարող է լինել՝ որտեղ որ ճշմարիտ սրբութիւն

չըկայ. Թէ և սրբութիւնն ինքն կա-
րող չէ առանց բարեգործութեան
լինել։ Թէ որ սուրբ ես ոչ միայն
մեղքերյն ես յետ քաշվում, բայց էլ
ճշմարտապէս նորան ատումես քո սըր-
տումդ։ Այն մեղքերըն էլ ատումես
ինչու որ էն ամէնըն։ որ աստուծոյ
կամքին հակառակ է, ատումես և
զզվումես. մինչև որ էլ քո էն զըզ-
վելն ինքն քո անձին վերայ է դառ-
նում. նրա համար որ դեռ միշտ մե-
ղաւոր ցանկութիւն է մնում քեզա-
նում։ Պատճառն որ եթէ քո մեղ-
քերըն քննումես ոչ միայն քո կենցա-
ղավարութենումն կըգտնես, բայց էլ
քո սրտումդ. ինչու որ եթէ սուրբ
մարդ ես, ապա քո խղճմտանքդ ցա-
ւումէ՝ ոչ միայն գործքերի և խօս-
քերի համար, բայց էլ քո մտած-
մունքների և ծածուկ ցանկութիւն-
ների համար, որ մեղաւոր են։ Ու-
րեմն ցանկանումես որ ոչ միայն աշ-
խարհքի աչքումն բարեձև երևես,
բայց որ աստուծոյն հաճոյ լինիս՝ որ
քո միտքդ և սիրտդ աստուծոյ կամ-

քին և հաճոյութեան հաւասար լինի։ Դորանի էսպէս է։ Մի՛տքդ բեր՝ որ գրված է (Թէ) առանց սրբութեան ոչ ով կարող չէ տէրին տեսնել։ Որ քիչ խօսքով ասեմ. սրբութիւն աստուծոյ սէրն է որ մեր սրտերի մէջ փռված է էն սուրբ հոգոյ ձեռովն՝ որ տրված մեզ։

Էնց էս սէրս շարժումէ մեզ որ ամէն բանի մէջ սուրբ հնազանդութիւն ցոյց տանք և աստուծոյ խօսքն էն կանոնն է լինում որ նորան պէս մեր կեանքի բոլոր ճանապարհներըն շիտակենք է կառավարենք. և աստուծոյ փառքն մեր առաջին դրած է ինչպէս որ մեր ամէն կենցաղավարութեան և գործքերի պատճառն և վերջն։ Բայց հիմիկ ոչ ով կարող չէ երկնքի արքայութիւնն մտնել մինչև որ սրբված լինի։ Հաւատում՞ս դու սրան. և քո սրտումդ աղօթք ես անում, թէ Տէր ամենևին սրբիր ինձ, հոգոյ, մտքի, և մարմնոյ կողմանէ։ Եթէ էսպէս է, ապա Տէրըն սկսել է իրան բարի գործն քո

սրտումդ, և էն էլ կըկատարէ մինչև Յիսուսի Քրիստոսի օրն, որ դու սո՛րբ և անարատ կանգնիս նորա առաջին սիրով։

## ՏԱՍՆԵՒ ԵՐՐՈՐԴ ՔԱՐՈԶ։

Մտիկ տանք էն երանելի յուսոյն՝ և մեծ աստուծոյ և մեր փրկիչ Յիսուսի Քրիստոսի փառաւոր յայտնութեանն։ (Տիտոս. Բ. 13.)

Քրիստոսին հաւատացած մարդը երանելի և աստուածնական շնորհքն էս է, որ իրան տէրի մին. էլ գալուն և յայտնութեանն մտիկ տայ։ Յիսուս խոստացաւ՝ թէ ինքն մինէլ կըգայ, և թէ շուտով կըգայ։ (Յայտ. Իբ. 20։) Նա յայտնեց թէ իրան գալն յանկարծակի պիտի լինի ինչպէս գիշերվան գողի գալն։ (Ա. Թես. Ե. 2.) Ապա ճշմարիտ հաւատացեալն է էնպէսի մարդ՝ որ յուսով խնդրումէ նորան, սպասումէ նորան, և պատրաստ է ուրախութենով ընդունել նորան։ Պատ-

Ճառն որ՝ նա հաստատ գիտումէ՝ որ
տէր Յիսուսն կըյայտնըվի երկնքիցն
իրան զօրութեան հրեշտակներումն
կրակի բոցով վրէժ առնելու նո-
րանցից որ աստուծոյն չեն ճանաչում,
և մեր տէր Յիսուսի Քրիստոսի ա-
ւետարանին չեն հնազանդվում, որ
նորանք պատիժ կըքաշեն յաւիտե-
նական կորուստըն Տէրի երեսիցն՝ և
նորա փառաւոր զօրութենից։ Բայց
նրա վերայ էն էլ գիտումէ թէ նո-
րա մին էլ գալու պատճառն էն է,
որ փառաւոր լինի իրան սրբերումն
և զարմանալի իրան հաւատացեալ-
ներումն։ (Բ. Թէս. ա. 7. 8։) Նրա
համար էլ նա մոտիկ է տալիս էն
երանելի յուսոյն։ Պատճառն որ՝ Յի-
սուսի Քրիստոսի ձեռումն խաղաղու-
թիւն ունի աստուծոյ հետ. որովհե-
տև էն մեղքն և յանցաւորութիւնն
որ ամէն վախին պատճառ է, հեռու
վէր կալվաւ նրանից. Նա հաւատումէ՝
թէ դատաւորն իրան բարեկամ է, և
նրա համար շատ ուրախ յուսով մոտիկ
է տալիս նորան։ Նա իմանումէ թէ

իրան հիմնկլան վիճակն իրան յա-
տուկ հանգիստ չէ. պատճառն որ՝
թէ և մեղաց դատապարտութիւնն
նորա խղճմտանքիցն՝ և մեղաց սէրն
և զօրութիւնն նորա սրտիցն՝ վէր է
կալվել. բայց ինչպէս Լ Նա տրտմու-
թենով է իմանում. թէ դեռ մեղք
կայ բնակված իրանում և նորա հա-
մար շատ ցանկանումէ Քրիստոսի
գալուստն՝ որ էն իսպառ քանդէ և վէր
առնէ: Այն յոյսն որ նա ունի՝ երա-
նելի յոյս է. պատճառն որ էն բա-
ները որ նորանց յուսով մտիկ է տա-
լիս. ամէնից պատուելի են, և միշտ
կենալով և մնալով յաւիտենական և
հաստատեն էն մարդոյ համար, որ
հաւատքով և յուսով սպասումէ նո-
րանց: Մենք որ էս մարմնոյ և ա-
րիւնի ծածքի տակն ենք. (Բ. Կոր.
Ե. 4.) մեղքով, նեղութենով, և
փորձութենով ծանրացած զզվումենք
բայց մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
փառաւոր յայտնութեան ժամանակն
աստուած ամէն արտասունքն կըսրբէ
մեր աչքերիցն, և էլ մահ չի լի-

նիլը, ոչ սուգ, ոչ աղաղակ, ոչ ցաւ, ոչ աշխատանք եւ չէ լինիլ. ինչու որ՝ առաջինն անցկացաւ։

## ՏԱՄՆ ԻՒ ՉՈՐՐՈՐԴ ԿԲԱ-ՐԱՕ։

Թէ որ դուք որ չար էք՝ գիտումէք բարի պարգեւներ տալ ձեր որդոցն, եւ որքան աւելի ձեր երկնաւոր Հայրն բարի բաներ սուրբ Հոգին կըտայ նորանց որ խնդրումեն նորան։ (Ղուկ. Ե. 4.)

Այս խօսքերովս մեր մարդասէր Հայրն՝ որ երկնքումն է ցոյց է տալիս մեզ, որ մին շատ հարկաւոր բան հենց մեր խղճմտանքովն իմանանք և հաստատենք։

Նա մեր միտքս է բերում էն շարժմունքները և քաղցր սէրըն որ իբր ծնօղք որդոյ վերայ ունինք, որ մեր յոյսըն հաստատէ, և զարթնացնէ. և սրա համար ասումէ. ձեզանից ով է

էն հայրն որ նորանից իրան որդին
հաց խնդրէ, մի թէ քար կտայ նո-
րան։ Մի թէ մին սոված երախայ ի-
րան հօր մօտ գայ՝ և ասէ նորան․
Ով հայր սովամահ կորչումեմ, հաց
տուր ինձ որ ուտեմ․ ապա հայրն
թէ որ գաղանից աւելի չար չըլինի
մի թէ քար կտայ իրան որդուն՝ մի
թէ կըծիծաղէ նորանով։ Կամ թէ որ
ձուկըն խնդրէ՝ մի թէ օձ կտայ
նորան․ կամ թէ որ ձու խնդրէ՝ մի
թէ կարիճ կտայ նորան, որ սպանէ
նորան։ Դրաճի որ չէ։ Ուրեմն որ-
քան աւելի էլ ձեր երկնաւոր հայ-
րըն, որ նորա սէրն անչափ մեծ է
իրան ողորմելի մեղաւոր որդոց վե-
րայ քան թէ ձերն, ձեր մարմնոյ ծը-
նունդի վերայ՝ բարի բաներ տ̃ սուրբ
հոգին նորանց կտայ, որ խնդրումեն
նորան։ Ես ողորմելի և անխելք
մեղաւոր եմ։ Ես կարօտութիւնն ու-
նիմ իմ անձըս ճանաչելոյ՝ որ աս-
տուծոյ առաջին մեղաւոր եմ, և նո-
րա արդար բարկութեան ներքեն
վէր ընկած։ Ես կարօտ եմ որ Յի-

սուս Քրիստոսին ճանաչեմ՝ որ նա իմ փրկիչ է. պատճառն որ՝ նորան ճանաչելն յաւիտենական կեանք է։ Բայց ես փրկութիւն տուող գիտութիւնըս մինակ երկնաւոր և աստուածային ուսմունքիցն կարող եմ ըստանալ։ Ո՞վ խոստացաւ տալ իւրան սուրբ Հոգին, որ աղքատ և անխելք մեղաւորին, որ իւրան անխելքութիւնըն իմանումէ առաջնորդէ էն ամէն ճշմարտութեան մէջ որ հարկաւոր է նորան մխիթարելոյ և փրկելոյ համար։ Ո՛վ տէր թող քո սուրբ Հոգիդ սովորցնէ ինձ։

Ես ողորմելի և անօգնական մեղաւոր եմ, և օրէյօր ճանաչումեմ՝ թէ կարողութիւն չունիմ որ աստուծոյ որդոյն հաւատամ։ Բայց էն հաւատքն որ Քրիստոսին ընդունումէ ամէնիցն աւելի հարկաւոր է փրկելոյ համար։ Իմ խղճմտանքս՝ խռովված է իմ մեղքերի պատճառովը. դանկանումեմ և կարօտ եմ որ ճանաչեմ նորան, և նորա յարութեան զօրութիւնըն։ Բայց էնքան անկարելի է

ինձ իմ անձիս զօրութեան ջանքովը հաւատալը, որքան որ անկարելի է ինձ մին աշխարհք ստեղծել։ Բայց աստուած խոստացել է տալ իրան սուրբ հոգին որ հաւատքըն ստեղծէ և գործէ ամէն մէկ մեղաւորի սըրտումն, որ խոնարհութենով աղաչում է իրան։ Ո՜վ տէր օգնութիւն արա ինձ, ինչպէս հաւատալը որ իմ խըղճմտանքի խաղաղութիւնն, իմ հոգոյ փրկութիւնն, և քո անուան յաւիտենական փառքն հաստատվի։

Աստուած իրան սուրբ հոգին նորանց է տալիս՝ որ խնդրումեն նորան։ Մենք առանց նորա օգնականութեան ոչինչ չենք կարող անել. բայց մենակ մեղանչելը որ հենց նորանով մեր անձներըս ապականումենք և կորցնումենք։ Մի թէ իմանումես դու թէ կարող ես էն օգնականութեանն։ Ը՛ մի թէ էն կարօտութիւնն և անչափ խեղճութիւնն տանումեն քեզ շնորհաց աթոռին մօտ, որ աստուծոյ ամէնից հարուստ շընորհքըն տանաս։ Մի թէ դու էլ

էնպէս խնդրումես՝ ինչպէս մին սոված երախայ իրան հօրիցն հաց է խնդրում։ Դրաճի՞ է որ միտքդ աուէր քո անխելքութիւնդ՝ էնպէս որ բոլոր սրտով սուրբ հոգոյ աստուածային ուսմունքն խնդրես. և Ճանաչեցի՞ր քո անօգնական վիճակդ՝ էնպէս որ աստուածանից օգնականութիւն խնդրես։

Խնդրեցէ՛ք՝ և կըտրվի ձեզ՝ ման եկէք և կըգտնէք, դուռն թակեցէք՝ և կըբացվի ձեզ։ Միտքդ բեր՝ որ աստուած կարող չէ իրան խօսքըն քանդել։ Եթէ խնդրեցիր՝ և չառիր, իմացի՛ր որ ջերմեռանդութենով չըխնդրեցիր։ Դու քո պակասութիւնըդ չես իմանում։ Ապա խնդրի՛ր աստուածանից որ տայ՝ քեզ քո պակասութիւնըդ ճանաչել, և ապա նա կըցուցնէ նորանց. աղաչի՛ր նորան որ սովորցնէ քեզ աղօթք անել. Եկ նորա մօտ ինչպէս աղքատ, անխելք, անմիտ, և թուլացած մանուկ պատճառն որ՝ եթէ չըդառնայք, և չըլինիք երախաների նման, կարող

չէք երկնքի արքայութիւնն մտնել։ (Մատթ. ԺԸ. 3։) Ապա ուրեմն ով Տէր շնորհիր մեզ էս հոգիս, որ երախաների նման լինինք։

## ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ։

Մարդկանց համար սահմանւած է մին անգամ մեռնիլ. և նորանից ետև դատաստանն։ (Եբր. Թ. 27։)

Ես և դու մահկանացու ստեղծւածներ ենք։ Մենք տեսինք որ մեր բարեկամներից և ազգականներից շատերն գերեզմանի մէջ դրւան. շատերն որ մեզ նման առողջ էին, և յոյս ունէին, որ էլ շատ ժամանակ մեզ հետ ապրին էս երևելի աշխարհքում. մենք տեսինք որ մին քանիսն շատ օրվան հիւանդութենով և տկարութենով մաշվեցան և կեանքիցս վէր կալվան, և մին քանիսն յանկարծակի էս կեանքիցս կտրվեցան՝ առանց իմանալոյ իրանց մեռնելոյ

սահաթըն։ Մինակ աստուած է գիտում, թէ մենք երբ պիտի նորանց եաւէն գնանք դէպի յաւիտենական աշխարհքն։ Մենք մեր վերջին օրն խակի չենք գիտում, պատճառն որ՝ մեր ժամանակներն աստուծոյ ձեռքն են, և կարելի է որ հենց էս գիշերումն մեր մեռնելոյ սահաթն գայ։ Բայց հաստատ էն ենք գիտում, թէ պէտք է որ մեռնելոյ սահաթն գայ. և էն էլ հաստատ գիտումենք թէ նա շատ հեռու չէ մեզանից. միայն թէ որքան մօտիկ լինի՝ էն չենք գիտում։ Բայց հիմիկ եթէ էս ամէնն ճշմարիտ է. ապա ինչ անմտութիւն և յիմարութիւն է. ճշմարիտ ապաշխարութեան հարկաւոր գործն հեռու քցել և օրէցօր նորա ուշացնել։ Հաստատ չենք գիտում. եթէ աւաւօտըն ենք տեսնելու։ Ուրեմն որովհետև ապաշխարութիւնն աստուծոյ պարգև է, ապա մենք եթէ ծուլանանք էն էս օրումն խնդրել և նորա զգուշացնօղ ձայնըն չըլսենք իրաւի որ նա կասէ մեզ ինչպէս որ

առակներումն ասել է. տ. գլ. 24. Լա.) Թէ որովհետև ես կանչումէի և չէլիք լսում. իմ խօսքերըս երկարացընումէի. և ականջ չէիք դնում. բայց իմ խորհուրդներըս անարգումէիք. և իմ խրատներիս ականջ չէիք դնում. Նրա սրանից ևս ես կըծիծաղեմ ձեր կորստումն և ուրախ կըլինիմ՝ երբ որ նեղութիւն և պաշարվելըն կըգայ ձեզ վերայ։ Նա՛ երբ որ յանկարծակի խռովութիւն կըհասնէ ձեզ և կործանվելըն մրրիկ (փոթորիկ տանոյ) նմանութենով կըգայ. կամ երբ սատակվելըն կըհասնէ ձեզ վերայ. կըլինի որ ինձ կանչէք. և ես չեմ լսիլ ձեզ. չարերըն կըխնդրեն ինձ՝ և չեն գտնիլ։ Ինչու՞ որ՝ իմաստութիւնըն ատեցին, և Տէրի վախըն չըխընդրեցին։

Մեռնելուցն ևս դատաստանն է գալիս։

Մենք ամէնքս պէտք է Քրիստոսի դատաստանի աթոռի առաջին կանգնինք որ ամէն բանի համար պատասխան տանք, որ մարմնոյ մէջ

գործեցինք, թէ բարի լինի և թէ չար։ Ապա ո՞վ է որ պէտք է էնտեղ կանգնի. ամէն մէկն, թէ փոքրն թէ մեծն, թէ մեծատունն թէ աղքատըն, ինչու՞ որ՝ ինչի ջոկութիւն կամ զանազանութիւն չըկայ։ Ապա դու և ես պէտք է երևինք էնտեղ։ Բայց ինչու՞ համար։ Հենց նրա համար որ ամէնակարող դատաւորի առաջին մեր ամէն ծածուկ խորհուրդներին համար և մեր ամէն ծածուկ գործքերին համար պատասխան տանք։ Նա մին յիշատակի գիրք է պահում. որ նորանում ամէն չար խորհուրդներն, խօսքերն, և գործքերն գրված են, որ նորանցից ամէն մէկն առաջ կըբերվի մեզ յանցաւորեան ամաչացընելու համար. եթէ տէր Յիսուսի Քրիստոսի պատուական արիւնովն էն ամէնեցուն սրբված չըլինինք։ Կարդումենք ածաշունչ գրքումն. (Յայտն. Զ. 16.) թէ մին քանիսն էն օրումն կըկանչեն դէպի սարերն և քարերըն կասեն թէ մեզ վերայ ընկէք, և ծածկեցէք մեզ աթոռի վերայ

նստողի երեսիցն, և գառի բարկութենիցն։ Բայց տէրն տայ որ քեզ և ինձ չըպատահի էսպէսի կորուստ և խեղճութի։ Դու ահաւոր վիճակից պրծնելոյ համար, Թող Տէրին խնդրենք դեռ քանի որ նա մօտիկ է։ Թող ամբարիշտն իրան ճանապարհըն Թողէ, և անօրէն մարդն իրան խորհուրդներըն, և դառնայ տէրըն մօտ՝ և ողորմութիւն կըգտնէ. և մեր աստուծոյ մօտ՝ որ շատ առատութենով նորա անօրէնութիւններըն կըթողէ։ Ահա էս է շնորհայ և փրկութեան օրն։ Բայց երբ որ դատաստանի օրն կըգայ. ապա անկարելի կըլինի որ ողորմութիւն խնդրես և գտնես։ Եթէ մեռնիս առանց Քրիստոսի հետ մասնակցութիւն ստանալոյ. Ապա լաւ էր քեզ որ իսկի ծնուած չըլինէիր։ Պատճառն որ՝ լաւ է իսկի աշխարքի մէջ չըծնվելու՝ քան թէ միշտ և միշտ և յաւիտեան տանջանք քաշել և ողորմելի լինել դժոխքի մէջն։ Բայց հաստատ է որ հենց ամէն մեղաւորների բաժինն էս պիտի լինի՝ որ ի-

րանց մեղաց համար թողութիւն չը-
խնդրեցին, և չըզղջացան իրանց տէր
աստուծոյ մօտ դառնալոյ համար։
Պատճառն որ հենց աստուած ասաց
էն՝ նա որ կարօղ չէ սուտ ասել։

## ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ։

Մենք ինչպէս կըպարծնինք թէ որ անհոգ լինինք էնպէսի մեծ փրկութեան համար։ (Եբր. Բ. 3)

Իրաւի որ մեծ է էս փրկութիւնս և ամէն մէկից էլ մեծ. ինչու որ էնպէսի փրկութիւն է՝ որ հենց աստուծոյ իմաստութեանը և սիրոյը հաստատուած է իմ օղորմելի և կորած հոգոյս համար. և էնպէսի փըրկուէի որ հենց ա՜յ միածին որդոյ մահովը պատրաստուած է։ Ո՞վ թէ քանի մօտիկ էի ես դժոխքի ափեն (ղըրաղէն,) որքա՜ն խոր ընկած էի, քանի՞ շատ և մեծ էին իմ մեղքերն, որ էսպէսի մեծ փրկութիւն հարկաւոր էր ինձ համար։ Ուրեմն քանի՞

աշաւոր բան է նորա համար անհոգ-
լինիլն։ Պատճառն որ՝ աստուած էլ
ուրիշ որդի չունի որ աշխարհքի
համար տայ։ Ապա եթէ ծուլանաս,
և անհոգ լինիս էս փրկութեանս հա-
մար. եթէ ջանք չանես որ ճշմար-
տապէս սասանա նորան, եթէ միաք
չանես քո մեծ կորուստի համար, և
փրկութեան համար որ քո առաջևդ
կայ էլ ասա. Ինչպէս կարելի է
քեզ որ ապրես. անկարելի է։ Պատ-
ճառն որ՝ դու էն մին մենակ փըր-
կիչն անարգումես. որ նորանով ա-
մենից մեծ մեղք ես գործում. աս-
տուծոյ ողորմութիւնըն որ Քրիստո-
սումն է դէն ես քցում, և Քրիստո-
սի պատուականն արիւնըն ոտի տակ
ես կոխ տալիս։ Ուրեմն չե՞ս վախե-
նում և դողդողում էդպէսի մտած-
մունքների համար։ Էնց հաստատ
հաւատա՝ թէ ամէն մեղաւոր մարդ
որ ծուլացած և անհոգ է և աղօթքի
համար ջերմեռանդ չէ, աստուծոյ
ողորմութեան և Քրիստոսի փրկութեան
դէմ անհնարին խիստ մեղանչումէ.

բայց խնկի ազատութիւն և մխիթա-
րութիւն չըկայ նորանց համար, որ
Քրիստոսին անարգումն. պատճառն
որ՝ սրանից ետև մեղքերի համար
էլ աւելի պատարագ չըկայ. նորանց
կորուստն հաստատ է և մօտիկ է՝ և
յաւիտենական և անտանելի կըլլի-
նի։ Նորա միտքդ բեր թէ ահա էս է
ընդունելի ժամանակ. ահա էս է
փրկութեան օրն։ (Բ. Կորն. Զ. 2.)
Եթէ առանց Քրիստոսի մեռնիս,
անկարելի է քեզ որ աստուծոյ ե-
րեսըն համարձակութենով և մխի-
թարութենով տեսնես. Բայց հաս-
տատ մնումէ քեզ համար, որ լսես
դատաւորի բերանից էն ահաւոր
վճիռն որ ասաց. թէ հեռու գնացէք
անիծվածներդ՝ յաւիտենական կրակն
որ սատանային և նորա հրեշտակնե-
րին համար պատրաստված է։ (Մատթ.
ԻԵ. 41։) Բայց լիցի՝ Աստուած չի
անէ։ Նրա համար մին էլ աղաչու-
մեմ քեզ ով իմ մեղաւոր ընկեր՝
էս գիրքս վերջացնելուց և խփելուց
առաջ կանգնիր և միտք արա. և մա-

նահանդ ծունր դիր և երեսի վերայ ընկիր և դէպի աստուած աղօթք արա՛ որ քո խղճմտանքըդ զարթնայնէ և Քրիստոսի գիտութիւնըն քեզ շընորհէ։ Հենց իմ աղաչանքս և աղօթքս էլ վերանումեն դէպի աստուծած որ քո փրկութիւնդ հաստատվի։ Էլ իմ առաջ իս մին ուրիշ պատճառ չըկայ էս գիրքս քո ձեռքդ տալու համար, բայց մէնակ քո հոգու յաւիտենական փրկութիւնն։ Ով իմ աստուած տուր՝ որ էս փոքր գիրքս շատ պտուղ բերէ կարդացողների հոգուն համար. թէ հիմիկ և թէ յաւիտեան. շնորհիր քո օրհնութենովդ, որ սորանում գրած պատուական ճշմարտութիւններն անուշ հոտ լինեն կեանքից դէպի կեանք, և ոչ թէ մահից դէպի մահ։ Աղաչումեմ քեզ ով Տէր շնորհիր էս Յիսուսի Քրիստոսի համար. Ամէն. Ըլնի։

Շուշի բերդումն աւետարանական ժողովքի տան մէջն էս հետեւող գրեանքս էլ ծախվումեն։

---

1. Նոր կտակարան տպեալ ՚ի Վենետիկ։
2. Համառօտութիւն քերականութեան։
3. Համառօտ բառգիրք ՚ի գրաբարէ յաշխարհաբար։
4. Ընթերցուածք ՚ի հին կտակարանէ։
5. Հաւաքումն աստուածային վկայութեանց. գրաբար և աշխարհաբար։
6. Պատմութիւն սուրբ գրոց գրաբար։
7. Տետրակ այբուբենական։
8. Առաջին կանոն սաղմոսի։
9. Երեք խօսակցութիւնք մի քահանայի մի աշխարհական մարդոյ հետը. աշխարհաբար։
10. Աւետարանի զօրութիւն կամ մի արաբ ծառայի պատմութիւն։ աշխարհաբար։
11. Համառօտ քննութիւն քրիստոնէական հաւատոյ և մահմետական կրօնի. աշխարհաբար։
12. Շատ հարկաւոր հարցմունքներ. աշխարհաբար։

13. Ժամանակն վերջին. աղօթարանեաւ։
14. Մարմնաւոր աղօթքներ շաբաթն ա-
մեն մէկ օրէն համար աղօթարանեաւ։

~~~~~~~~
~~~~~~~~



